ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«__»_____2025թ. **N_____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

1991 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԸ ԵՐԵՎԱՆԻ ՆԱԽԿԻՆ ԹԱՂԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆԱԾ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՔՆՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. 1991 թվականի սեպտեմբերի 21-ից մինչև 2025 թվականը Երևանի նախկին թաղային համայնքներին և Երևան համայնքին պատկանած մանկապարտեզների և դպրոցների տարածքների օտարման գործընթացներն ուսումնասիրելու նպատակով ստեղծել Երևան քաղաքի ավագանու քննող հանձնաժողով (այսուհետ՝ Քննող հանձնաժողով):
2. Քննող հանձնաժողովի անդամների թիվը սահմանել 12:
3. Հաստատել Քննող հանձնաժողովի հետևյալ կազմը՝

1) Արմեն Գալջյան - Հանձնաժողովի նախագահ, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,
2) Հայկ Միրզոյան - «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,
3) Լուսինե Սարգսյան - «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,

4) Անի Խաչատրյան - «Հանրապետություն» խմբակցություն,
5) Միեր Բեջանյան - «Հանրապետություն» խմբակցություն,
6) Հարություն Մանվելյան - «Հանրապետություն» խմբակցություն,
7) Արամ Թորոսյան - «Ազգային Առաջընթաց» խմբակցություն,
8) Իոսիֆ Կուբատյան - «Ազգային Առաջընթաց» խմբակցություն,
9) Սեդա Տեր-Մինասյան - «Ազգային Առաջընթաց» խմբակցություն,
10) Վահան Ավագյան - «Հանրային Ձայն» խմբակցություն,
11) Վահե Եսայան - «Հանրային Ձայն» խմբակցություն,
12) Լուսինե Բուղայան - «Հանրային Ձայն» խմբակցություն:

4. Ընդունել ի գիտություն, որ հանձնաժողովը գործում է սույն որոշման ընդունման պահից առավելագույնը 6 ամիս ժամկետով:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ **ԱՐՄԵՆ ԳԱԼՋՅԱՆ**

ՀԱՅԿ ՄԻՐԶՈՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«1991 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԸ ԵՐԵՎԱՆԻ ՆԱԽԿԻՆ ԹԱՂԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆԱԾ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՔՆՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի՝ Ավագանու որևէ խմբակցության պահանջով Երևանում տեղական ինքնակառավարմանը վերաբերող հասարակական հետաքրքրություն ներկայացնող փաստեր պարզելու նպատակով ստեղծվում է ժամանակավոր քննող հանձնաժողով:

1996-2018 թվականների ընթացքում Երևան համայնքի կառավարման ներքո գտնվող մի շարք նախադպրոցական և կրթամշակութային հաստատությունների տարածքների օտարումները բազմաթիվ անգամ դարձել է հանրային քննարկման, քննադատության և մտահոգության առարկա:

Հաշվի առնելով վերոնշյալ գործընթացների նկատմամբ հասարակության շրջանում առկա մեծ հետաքրքրությունը, դրանցում հնարավոր գործողությունները, որոնք ի վնաս համայնքային շահերի են եղել՝ նպատակահարմար է ստեղծել ավագանու Քննող հանձնաժողով, որը կիրականացնի մանրամասն ուսումնասիրություն՝ պարզելու փաստական տվյալներ, գնահատելու գործընթացների հիմնավորվածությունը և այդ մասին կիրազեկի հանրությանը: Հիմք ընդունելով «Ազգային Առաջընթաց» խմբակցության 03.06.2025թ. գրավոր առաջարկը՝ հանձնաժողովի ուսումնասիրության ժամանակաշրջանը ընդլայնվել է՝ ներառելով 1991-2025 թվականները, ինչպես նաև ներառվել են երաժշտական և սպորտային դպրոցների տարածքների հնարավոր օտարումների գործարքները:

Հաշվի առնելով հարցի կարևորությունն ու ընդգրկուն բնույթը՝ համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ մասի՝ առաջարկվում է Քննող հանձնաժողովի կազմը հաստատել երեքական անդամ յուրաքանչյուր խմբակցությունից, սակայն, հաշվի առնելով, որ Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցությունը համաձայն 05.06.2025թ. N134 գրության նպատակահարմար չի համարել ընդգրկվել հանձնաժողովի կազմում, այն կազմված է 12 անդամից:

Քննող հանձնաժողովի գործունեությունը կնպաստի Երևանի համայնքային գույքի կառավարման գործընթացներում թափանցիկության, արդարության և հանրային հաշվետվողականության ամրապնդմանը:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ **ԱՐՄԵՆ ԳԱԼՋՅԱՆ**

ՀԱՅԿ ՄԻՐԶՈՅԱՆ